# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, ք Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ ___________ «_____»_______ _2023թ.

**Ինֆորմացիոն ազատության կենտրոն**

**Շուշան Դոյդոյանին**

**Հասցե՝ ք.Երևան,Փ.Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ**

Ի պատասխան Ձեր 13.07.2023թ. h.864103 տեղակատվություն ստանալու հարցմանը.

Հայտնում եմ, որ ՀՀ ներքին գործերի նախարարությունում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ դեռևս չի նշանակվել, քանի որ ՀՀ Ներքին գործերի նախարարության կազմավորման գործընթացը ավարտված չէ:

Ըստ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչության կողմից տրամադրված տեղեկությունների, տեղեկատվական արշավների կազմակերպման և իրականացման համար ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով և այլ ռեսուրսներով դրամական ծախսեր չեն նախատեսվել: Ինչ վերաբերվում է ՀՀ ներքին գործերի նախարարության պաշտոնական կայքի պատրաստմանը կամ բարեփոխմանը վերաբերող հարցին տեղեկացնում եմ, որ <<mia.gov.am>> ՀՀ ՆԳՆ պաշտոնական կայքը ստեղծվել և ներդրվել է ՀՀ ԲՏԱ նախարարության կողմից առանց ֆինանսական ներդրումների:

7/20/2023

X

ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՓԱԽՉՅԱՆ

Signed by: PAPAKHCHYAN ANDRANIK 4010660104

***Պետ, ոստիկանության գնդապետ*** ***Ա.Փափախչյան***

Կատարող՝ ՀՀ ՆԳՆ ոստ. ԳԳՌԱ վարչություն
Գ.Կարապետյան/ 010-59-65-30/